



Ծ Ի Ա Ծ Ա Ն


ԱՄՍԱԳԻՐ

ԹԵՄԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՆՅ.

ԱՊՐԻԼ

1865 ԱՄԻ.

ԹԵՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ



հերուարի 19. — Առաջնորդական Ատեանս յուզարկեց վիճակիս ամենայն Հոգեւոր Կառավարութեանց եւ քահանայից այն շրջաբերական նամակը՝ որով Գերապատիւ Տեղական Առաջնորդութեան վիճակիս՝ կամելով փարատել ի մտաց հաւատացելոց մօտերս պատահած անցքերէն պատճառեալ գայթակղութիւնը, տարակոյսներն ու կաւկածանքները, կծանուցանէր ամենուն այն անցքերուն համառօտ պատմութիւնը եւ ստոյգ պատճառները, եւ յետոյ կյորգորէր

զամենեւեան ի սէր եւ ի միաբանութիւն, ի հաւատարմութիւն առ Մեծազօր Տէրութիւնն, եւ ի խոնարհ հպատակութիւն առ Մայր Աթոռն Ս. Էջմիածնի:

Մարտի 1. — Ըստ որոշման Առաջնորդական Ատենիս՝ Գրիգորուպօլսոյ Հոգեւոր Կառավարութեան Անդամ Արժանապատիւ Դաւիթ քահանայն Շահինեանց՝ կարգեցաւ Անդամ Կոնսիստորիայիս Հայոց Նախիջևանի եւ Պետրապօլսոյ, եւ միանգամայն կրօնական ուսմանց դատատու ի Խալիպեան ազգային ուսումնարանին:

Մարտի 15. — Վեհափառ Կաթողիկոսէն Վիճակիս կառավարիչ նշանակուած Յովհաննէս արքեպիսկոպոսն Արշարունի յունուարի 28-ին հասաւ Նախիջևեան. 31-ին Մայր եկեղեցւոյն մէջ Առաջնորդական Աթոռը նստաւ, եւ անգլոյն եկեղեցականներէն պահանջեց իւր հրամանացը հպատակութիւն: — Փետրուարի 4-ին քաղաքական իշխանութեան ձեռքովը հրատարակուեցաւ Նախիջևեանի մէջ Տէրութեան հրամանը, որ Վիճակիս Կառավարիչ ճանչցուի միայն Կայսերական

հրովարտակով հաստատուած անձը: — Մարտի 11-ին Յովհաննէս Արքեպիսկոպոսը ճանապարհ ելաւ Նախիջևեանէն դառնալու ի Ս. էջմիածին, եւ 31-ին հրատարակուեցաւ դարձեալ ամենայն եկեղեցեաց Նախիջևեանի թէ Վիճակիս հոգեւոր գործերուն համար նշանակուած վերազննութիւնը Կայսերական հրամանով դադրած է, եւ Անդրէաս Արքեպիսկոպոսը հրաման չունի վիճակիս կառավարութեան գործերուն խառնուելու:

ԱՏԵՆԱԽՍՈՒԹԻՒՆ ԱՌԱՋՆՈՐԻՒՆ

ՅԵԿԵՂԵՏԻՈՋ ԹԷՈԴՈՍԻՈՅ Ի ԿԻՒՐԱԿԷԻ ԴԱՏԱՆՈՐԻՒՆ.

« Հարկ է գալ գայրակողութեան. բայց վնյ մարդոյն այնմիկ է յոյր ձեռն գայցի գայրակողութիւն »:

Քրիստոսի Տեառն մերոյ սուրբ Աւետարանին մեջ րսած խօսքերուն սոսկալիներէն մեկը, մանաւանդ թէ ամենէն ալ սոսկալին այս է. « Հարկ է գալ գայրակողութեան ». — պէ՛ս է որ գայրակողութիւնը, այսինքն գեոութիւնը, չարիքը, մեղքը, չար օրինակն ու չար խրատը աշխարհիս երեսն չպակսին. բայց վնյ այն մարդուն որ պատճառ կլինի գայրակողութեան. չար օրինակովը, չար խրատովը եւ չար գործովը ուրիշներուն ալ մեղքի եւ չարութեան մեջ ընկնելուն գործիք կդառնայ: Լաւ էր, կըսէ Քրիստոս, որ այնպիսին ինքը իրեն վիզը ծանր քաւ մը կապէր ու ծովը նետուէր խղրուէր, քան թէ այս պարզամիտ, բարեսիրտ, հոգի պէս անմեղ հոգիներէն մեկը՝ գայրակողներ, ու անոր յաւիտեական կորստեանը պատճառ լինէր:

Ահա այս սարսափելի վայէն վախճալով նաեւ ես, Քրիստոսասէր ժողովուրդի, վիճակիս ամեն եկեղեցիները այսօրուան օրս, այս վայրկեանիս ժողովոց առջեւ կարդացուելու նամակ մը յուղարկած եմ, եւ այժմ կուգեմ այն նամակին միտքը ձեզի ալ հասկըցընել: Վասն զի մեր ազգին դժբաղդութենէն՝ թեպէս ամեն ժամանակ ալ պակաս չեն եղած մեր

մեջը զանազան գայրակողական երկառակութիւններ, ցաւալի կռիւներ, անհաշեղի հակառակութիւններ, բայց այս միջոցիս մեր վիճակին մեջ, եւ յանուանէ Նախիջևեան քաղաքին մեջ պատահածները ամենուն աչիքն աւելի կզարնեն, եւ շատ մարդիկ այն եղածները կամ ծուռ կլսեն եւ կամ ծուռ կհասկընան ու կգայրակողին: Ո՛րքան փափաքելի էր որ չլինէին այնպիսի խռովութիւններ ու գայրակողութիւններ. բայց ոչ. « Հարկ է գալ գայրակողութեան » կըսէ Քրիստոս. պէ՛ս է որ ինչպէս լոյսը շուք ալ կծագ, ինչպէս արեւն ալ բիծէր (լի՛կներ) ունի, ինչպէս ծովը ալեկոծութիւն եւ օդը փոքորիկներ ունի, եւ ինչպէս որ աշխարհիս երեսը բարին ու չարը միշտ մեկեղ խառն են, հարկ է՝ պէ՛ս է որ դախսին մեջ օձ մը զսնուի Աղամն ու եւան մեղքի մեջ ձգող, երկինքը սասանայ մը զսնուի՝ հրեշտակաց մեկ մասը Աստուծոյ դէմ ապստամբեցընող, Քրիստոսի Տեառն մերոյ իրէն ընտրած ճառարներու աշակերտացը մեջ Յուդա մը զսնուի՝ զինքը թեմամբներուն ձեռքը մասնող: Ինչո՞ւ համար. — մեր հասկըցածովը՝ որպէս զի չարին գեոութենէն՝ բարւոյն աղեկութիւնը աւելի լաւ հասկըցաւ, եւ Աստուծոյ արդարութեամբ չարը ասեկին իւր պատիժը առնու եւ բախն իւր վարձը: Իսկ բուն եւ իսկական պատ-